

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետի
գիտական խորհրդի 19.09.20թ. կայացած թիվ 2.20-21 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 36 անդամներից 24-ը:

Նիստը անցկացնել է առցանց հարցման ձևով:

Հաստատվեց հետևյալ օրակարգը`

1. Առկա ուսուցմամբ ասպիրանտների թեմաների և ղեկավարների հաստատում:
2. Անվանական կրթաթոշակների նշանակում:
3. Մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի ասիստենտ, ֆ.մ.գ.թ. Իշխան Վոլոդյայի Վարդանյանին դոցենտի կոչման ներկայացում:

Լսեցին` Առկա ուսուցմամբ ասպիրանտների թեմաների և ղեկավարների հաստատում:

Ելույթ ունեցավ ֆիզիկայի ֆակուլտետի ղեկան, օպտիկայի ամբիոնի պրոֆեսոր Ռ. Հակոբյանը: Նա ներկայացրեց օպտիկայի ամբիոնի առկա ուսուցման 1-ին տարվա ասպիրանտ Մաքսիմ Լիպարիտի Սարգսյանի գիտական թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը: Հակոբյանը ներկայացրեց առաջարկվող թեման, նշեց, որ այն արդիական է, ինչպես նաև ունի գիտական ու կիրառական նշանակություն:

Որոշեցին` Հաստատել ուսումնառության 1-ին տարվա հեռակա ասպիրանտ Մաքսիմ Լիպարիտի Սարգսյանի հետևյալ թեման` <<Իզոտրոպ և անիզոտրոպ միջավայրերում ձևավորված կառուցվածքների մեխանիկական և օպտիկական հատկությունների ուսումնասիրումը>>:

Գիտական ղեկավար նշանակել ֆիզ.-մաթ. գիտությունների դոկտոր, դոցենտ Ռաֆիկ Հակոբյանին:

Ելույթ ունեցավ Պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի վարիչ, ֆ.մ.գ. դոկտոր, պրոֆեսոր Արշակ Վարդանյանը: Նա ներկայացրեց Պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի առկա ուսուցման 1-ին տարվա ասպիրանտ Դուկասյան Տիգրան Կարենի գիտական թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

Որոշեցին՝ Հաստատել ուսումնառության 1-ին տարվա առկա ասպիրանտ Ղուկասյան Տիգրան Կարենի հետևյալ թեման՝ << Կիսահաղորդչային նանոկառուցվածքների օպտիկական բնութագրերի ուսումնասիրությունն էլեկտրոն-ֆոնոն փոխազդեցության առանձնահատկությունների հաշվառմամբ>>:

Գիտական ղեկավար նշանակել \$իգ.-մաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արշակ Վարդանյանին:

Ելույթ ունեցավ Մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի դոցենտ, \$.մ.գ. դոկտոր, Եվգենի Մամասախլիսովը: Նա ներկայացրեց Մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի առկա ուսուցման 1-ին տարվա ասպիրանտ Դավիթ Խեչոյան Գագիկի գիտական թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

Որոշեցին՝ Հաստատել ուսումնառության 1-ին տարվա հեռակա ասպիրանտ Դավիթ Խեչոյան Գագիկի հետևյալ թեման՝ << Նանոմասնիկների փոխազդեցությունը միաշղթա նուկլեինային թթուների հետ>>:

Գիտական ղեկավար նշանակել \$իգ.-մաթ. գիտությունների դոկտոր Եվգենի Մամասախլիսովին

Լսեցին՝ անվանական կրթաթոշակներ հատկացնելու հարցը:

Ելույթ ունեցավ ֆիզիկայի ֆակուլտետի գիտքարտուղար Գ. Հովհաննիսյանը: Նա ներկայացրեց անվանական կրթաթոշակի հավակնող ուսանողներին, ինչպես նաև անվանական կրթաթոշակի տրամադրման չափանիշները:

Որոշեցին՝ անվանական կրթաթոշակ հատկացնել ֆիզիկայի ֆակուլտետի ներքոհիշյալ ուսանողներին.

ԵՊՀ կրթաթոշակ

1. Հարությունյան Մերի Լևոնի - \$իգ.ֆակ. բակալավրիատի 4-րդ կուրս

Գուրգեն Սահակյանի անվան կրթաթոշակ

1. Ասատրյան Մարգարիտ Գառնիկի - \$իգ.ֆակ. մագիստրատուրա 1-ին կուրս

Ալիխանյան եղբայրների անվան կրթաթոշակ

1. ԱՊետոյան Անահիտ Արմենի - \$իգ.ֆակ. բակալավրիատի 3-րդ կուրս

Վիկտոր Համբարձումյանի անվան կրթաթոշակ

1. Վարոսյան Ռաֆֆի Հրայրի - \$իգ.ֆակ. բակալավրիատի 3-րդ կուրս

2. Ասատրյան Հրաչյա Հայկի

- Ֆիզ.Ֆակ. բակալավրիատի 4-րդ կուրս

Լսեցին՝ Մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի ասիստենտ, Ֆ.մ.գ.թ. Իշխան Վոլոդյայի Վարդանյանին դոցենտի կոչման ներկայացնելու հարցը:

Ելույթ ունեցավ Ֆիզիկայի ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ պարոն Ա. Կիրակոսյանը նշվեց, որ Իշխան Վարդանյանը ակտիվորեն զբաղվում է գիտական հետազոտություններով, հեղինակ է 24 գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների (այդ թվում, վերջին 5 տարիների ընթացքում 5 հոդվածի, 2 թեզիսի և 1 ուսումնական ձեռնարկի): Նա ֆիզ. մաթ. գիտ. թեկնածու է 2012 թ.-ից:

Որոշեցին՝ 1. Հիմք ընդունել մրցութային հանձնաժողովի եզրակացությունը Իշխան Վ. Վարդանյանի գիտամանկավարժական գործունեության մասին:

2. Երաշխավորել Մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի ասիստենտ Իշխան Վոլոդյայի Վարդանյանին դոցենտի կոչման ներկայացնելու համար:

Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան՝

Ռ.Ս. Հակոբյան

Խորհրդի քարտուղար՝

Գ.Հ. Հովհաննիսյան